ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՆՈՐ «ՀՈՐԻԶՈՆ»-ՆԵՐ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

2016թ. մայիսի 19-ին Բրյուսելում ստորագրվեց «Հորիզոն-2020» ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցության մասին համաձայնագիրը:

Հետազոտությունների և նորարարությունների ԵՄ «Հորիզոն-2020» շրջանակային (2014-2020) ծրագիրը գիտական հետազոտությունների և տեխնոլոգիական զարգացման աջակցության համաեվրոպական մասշտաբի 8-րդ Շրջանակային ծրագիրն է, որը գործելու է 2014-2020թթ. ընթացքում: Ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցության համաձայնագրի կնքման բանակցությունները սկսվել են դեռևս 2013թ. հուլիսին: 2015թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ կառավարությունը N 1255-Ա որոշմամբ համաձայնություն է տվել անդամակցության մասին համաձայնագրի կնքմանը:

Ժամանակակից գիտության առջև ծառացած բազմաթիվ խնդիրներ հնարավոր է լուծել միայն խոշոր միջպետական համագործակցությունների շրջանակներում, քանի որ դրանք պահանջում են մեծ ֆինանսական ու մարդկային ռեսուրսների կենտրոնացում, ինչը չեն կարող իրենց թույլ տալ նույնիսկ տնտեսապես ամենահզոր երկրները:

«Հորիզոն-2020»-ին Հայաստանի մասնակցությունը հանրապետության գիտական կազմակերպություններին, բուհերին, ինչպես նաև անհատ գիտնականներին ու ասպիրանտներին հնարավորություն կտա մասնակցել գիտության և տեխնիկայի զարգացման արդի մակարդակին համապատասխանող ամենաառաջնակարգ և կարևորագույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, խոշորամասշտաբ միջազգային գիտական համագործակցություններին, օգտվել եվրոպական գիտական կազմակերպությունների և համալսարանների ենթակառուցվածքներից, բարձրացնել տեխնոլոգիական ու նորարարական ունակությունները, գիտական հետազոտությունների մակարդակն ու արդյունավետությունը, ընդգրկվել գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման ու վերապատրաստման եվրոպական ծրագրերում, ավելացնել հանրապետության գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի արտաբյուջետային ֆինանսավորման ծավալները և այլն: «Հորիզոն-2020» ծրագրին կարող են մասնակցել գիտահետազոտական կենտրոնները, ինստիտուտները, համալսարանները, տեղական և տարածաշրջանային իշխանությունները, կորպորացիաները, փոքր և միջին ձեռնարկությունները, ոչ առևտրային կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները:

«Հորիզոն-2020»-ի ընդհանուր ֆինանսական ծավալները կազմում են շուրջ 80 մլրդ եվրո՝ յոթ տարվա համար: Ծրագրի միջոցով ֆինանսավորվելու են գիտական հետազոտությունների, էներգետիկայի, արդյունաբերության, նորարարության, նոր տեխնոլոգիաների, փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության խթանման բնագավառների հայտեր:

Ծրագրի շրջանակներում ֆինանսավորումը հատկացվում է միայն մրցութային հիմունքներով, որոնց իրավունք ունեն մասնակցելու ԵՄ անդամ-պետությունները և իրենց իրավասության տակ գտնվող 21 «անդրծովյան երկրներն ու տարածքները», «Հորիզոն-2020» ծրագրին ասոցացված երկրները (2015թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ՝13 երկիր, իսկ 2016թ. հունվարի 1-ից միացել է նաև Հայաստանը), ևս 134 երկրներ (2015թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ)՝ բացառու-

թյամբ այն դեպքերի, երբ հրավերի պայմաններով այս կամ այն երկրի մասնակցությունը բացառվում է:

Ծրագրին մասնակցելու համար կազմակերպություններին առաջադրված միակ պայմանը բարձր մակարդակի հետազոտությունների իրականացման ունակությունն է: Այդ իմաստով հայաստանյան բոլոր գիտական կազմակերպությունները և բուհերը բավարարում են «Հորիզոն-2020»-ի պահանջներին ու արդեն իսկ մասնակցում են ծրագրի մրցույթներին: Իհարկե, եթե մինչև 2016թ. հունվարի 1-ն այդ մասնակցությունն իրականացվում էր 3-րդ երկրների գիտական կազմակերպությունների կարգավիճակով, ապա՝ ներկայում այն լինելու է ինչպես ԵՄ անդամ-պետությունների և «Հորիզոն-2020» ծրագրին ասոցացված երկրների կազմակերպություններինն է:

«Հորիզոն-2020»-ին ասոցացված անդամակցության համար Հայաստանը յուրաքանչյուր տարի պետք է կատարի ֆինանսական ներդրում: Բանակցությունների արդյունքում Հայաստանի ֆինանսական ներդրումը լինելու է հաշվարկայինի 25 %-ը, որի 50% առաջին երկու տարիներին ֆինանսավորվելու է Հայաստանում ԵՄ պատվիրակության կողմից: Այսպիսով, «Հորիզոն-2020» ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցությունն իրականացվելու է 87.5 % զեղչի պայմաններում:

Բանակցությունների հաջողվածությունը կասկած չի հարուցում. նախ՝ «Հորիզոն-2020-ի» անդամակցության կարևորությունը, երկրորդը՝ մասնակցության վարձավճարի աննախադեպ զեղչը՝ Հայաստանը վճարելու է անդամավճարի միայն 12.5 %, և երրորդը՝ ապագա Շրջանակային ծրագրերին Հայաստանի մասնակցությունը լինելու է «Հորիզոն-2020»-ի անդամակցության մեխանիկական շարունակություն:

Գիտության պետական կոմիտեն կոչ է անում հայաստանյան գիտական կազմակերպություններին, բուհերին և, ընդհանրապես, գիտության ոլորտում ընդգրկվածներին՝ լինել առավել ակտիվ «Հորիզոն-2020» ծրագրի մրցույթներին մասնակցելու գործում: Կոմիտեն իր հերթին պատրաստակամություն է հայտնում այդ գործում ցուցաբերել համակողմանի աջակցություն:

«Էկոնոմիկա և Իրավունք» Կենտրոնը, միանալով Գիտության պետական կոմիտեի կոչին, դիմում է գիտական կազմակերպություններին, գիտության ոլորտի շահագրգիռ անձանց ակտիվորեն մասնակցել և աջակցել «Հորիզոն-2020» ծրագրի մրցույթներին:
«Էկոնոմիկա և Իրավունք» Կենտրոնը պատրաստակամություն է հայտնում շարունակաբար լուսաբանել և ներկայացնել մրցույթի մասնակիցներին մրցույթից առաջ, ընթացքում և մրցույթի ավարտից հետո՝ ամփոփելով արդյունքները: